ՅԵ. ՏԱՐԱԽՈՎՍԿԱՅԱ




# ՄԵՏՐՈ ՊՈԼԻՏԵՆ

891.71ս
Տ-26

2011-05
891.715
Տ-26

ՅԵ. ՏԱՐԱԽՈՎՍԿԱՅԱ

# ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ

Գիրքը ձևավորել են
Մ. ՍԵՐԵԳԻՆԸ յեվ Ի. ԻՍԱՅԵՎԱՆ

Լուսանկարներ.
Մ. ԳՐԵԽՆԵՐԻ

—

ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ՓՈԽԱԴՐԵՑ
Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

4104
40097

ՈՒՍՄԱՆԿՀՐԱՏ ◘ 1936 ◘ ՅԵՐԵՎԱՆ

ՀՈՆՔ-ССР

13 SEP 2013

5273



## ՑՈՒՑԱՆԱԿԸ

— Տրամվայով
Ասացիր։
Կուզես, ինքդ
Սպասիր։
Գնամ նստեմ
Ավտոբուս։
Եվ չխոսես,
Լուիր, սուս։
Կանգնեմ ժամերով։
Վո՛չ, մնաս բարով։
Մետրո պիտի
Նստեմ յես,
Դպրոց հասնեմ
Քամու պես։
Այնտեղ, ընկեր,
Մարդիկ նույնիսկ
Չեն սպասում
Յերեք րոպե։







Ութ նոր վագոն
Շարունակ
Գալիս, կանգնում են
Արագ։
Տունն ել մի
Հարկանի,
Հիանալի
Տեսք ունի։
Ճակատին ել
Մեծ տառերով
Սիրուն գրված ե.
«Մետրո»։





## ԻՆՔՆԱՇԱՐԺ ԴԱՐՁԿԱՊԸ

Հարկավոր չէ
Տոմսակ գնել,
Այնտեղ տոմսակն
Ի՞նչ անի,
Գցիր ժետոն
Ցեվ դարձկապը
Իսկույն մեզ ներս
Կթողնի։



## ՀՐԱՇՔ—ՍԱՆԴՈՒԽՔԸ

Սանդուխքներով
Ներքև իջնել
Ավելորդ է,
Ջի ուզի —
Հրաշք — սանդուխքն
Ինքն իրեն
Դեպի ներքև
Կվազի։
Միայն հիշիր՝
Ծաղաշարքից
Ամուր բռնիր,
Վոր չընկնես։



## ՍՏՈՐՅԵՐԿՐՅԱ ԿԱՅԱՆԸ

*Այստեղ լույս է*
*Կեսօրվա պես*
*Յեվ բարձր ու*
*Ընդարձակ,*
*Անթիվ սյուներ*
*Ու կամարներ*
*Յեվ վոսկեգույն*
*Առաստաղ։*
*Այստեղ լույս է*
*Ցերեկվա պես,*
*Պլպլում է,*
*Պլպլում,*






*Բայց վոչ մի տեղ*
*Կամարի տակ*
*Ճրագներ չեն*
*Յերևում։*
*Այստեղ, այնտեղ*
*Պատերի մեջ*
*Ոդափոխիչը*
*Արագ*
*Պտտվում է*
*Ու պտտվում,*
*Քամի անում*
*Շարունակ։*



ԳՆԱՑՔԸ

Յերկար, փայլուն
Այդ գնացքը
Մեզ չի թողնի
Գետնի տակ,
Յերկար, փայլուն
Այդ հրաշքը
Կգա շտապ
Ու արագ,
Կառնի, կանցնի
Ուրախ, զվարթ
Հազար յերկու
Հարյուր մարդ։





ՋԵՌՆԱԾՈՒ—ԴՈՒՌԸ

Իզուր տեղը դու մի հրի
Սիրուն դուռը ձեռնածու,
Հրհրելով ու քաշելով
Յերբեք ել նա չի բացվում։

Ինքն իրեն նա կբացվի
Դու չհրես, չքաշես,
Ինքն իրեն ել կփակվի,
Վոր դու ճամպին չթռչես։



## ՎԱԳՈՆՈՒՄ

Լուսավոր են
Ու պայծառ
Վագոնները
Ընդարձակ,
Ծրագներ կան
Անհամար —
Մի-մի պայծառ
Արեգակ։





Այս գնացքում
Հարկավոր չէ
Տոմսավաճառ,
Արդեն գիտեն,
Վոր դարձկապը
Մարդ չի՛ թողնի
Անվճար։











## ԿԱՐՄԻՐ ԱԶԴԱՆՇԱՆ

Նստենք այստեղ
Յես, դու մեկտեղ
Թիկնաթոռին
Այս սիրուն.









Քամու պես ենք
Մենք սլանում,
Վոչ վոք սրան
Չի հասնում։

Դե՛, ձեզ տեսնեմ —
Ձի՛, տրամվայ,
Ավտո, շոֆեր
Սրատես,

Դե՛, չափ ընկեք
Մեր յետևից.
Դուք կհասնե՞ք
Արդյոք մեզ։

Ճիշտ յերեսուն
Կիլոմետր ե
Գնացքն անցնում
Մի ժամում,



Քամու պես ենք
Մենք սլանում.
Վո՛չ վոք սրան
Չի՛ հասնում։

Յեթե հանկարծ
Տեսնի կարմիր
Ելեկտրական
Ազդանշան,

Նշանակում է
Պիտի կանգնել.
«Յերկյուղալի յե
Ճամպան»։





Յեվ նա իսկույն—
Մի վայրկյանում—
Քարանում է
Ու կանգնում,

Կարծես մարդ է
Նա սրատես
Յեվ տեսնում է
Ճիշտ մեզ պես։

Ահա հասանք,
Կանգնի՛ր, գնանք,
Չկորցնենք
Ժամանակ։

Չսպասեցինք
Տրամվային,
Դպրոց հասանք
Ճիշտ իննին։





ՀՐԱՇՔ—ՍԱՆԴՈՒԽՔԸ

Սանդուղքներով
Վերև գնալ
Ավելորդ է,
Չի ուզի—
Հրաշք-սանդուղքն
Ինքն իրեն
Դեպի վերև կվազի։
Միայն հիշիր՝
Ծաղաշարքից
Ամուր բռնիր,
Որ չընկնես։





ՀՍՍՀ-ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0392418

5273

563

Գինը 50 կոպ.

# ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Е. ТАРАХОВСКАЯ
МЕТРОПОЛИТЕН
Гиз ССР Армении, Эривань, 1936 г.

Պատ. խմբ. Սիրաս, տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան, սրբագրիչ՝ Հ. Դոլուխանյան. Գլավլ. լիազոր Կ. 1660, պատվեր 438, Հրատարակչակ. 3651, տիրաժ 3000. Պետհրատի տպարան, Երևան, 11 Գնունի № 4, հեռախոս 64.